



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2 ԱՊՐԻԼԻ 2017Թ.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԶՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ
ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2017

**Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի
2017 թվականի ապրիլի 2-ի ընտրություններին
Էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողներն իրենց
ծայնը տալիս են միայն ընտրություններին մասնակցող
կուսակցություններին, կուսակցությունների դաշինքին:**

**Էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրավունք
ունեն**

✓ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները.

✓ օտարերկրյա պետություններում երկարատև ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները.

✓ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից) արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները:

էլեկտրոնային եղանակով քվեարկությունն
իրականացվում է՝

- ✓ <https://online.elections.am> էջ այցելելով կամ
- ✓ Հայաստանի Հանրապետության կենտրոնական
ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի՝
www.elections.am համապատասխան հղման միջոցով:



Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի
2017թ. ապրիլի 2-ի ընտրությունների էլեկտրոնային
եղանակով քվեարկությունը՝

- ✓ սկսվում է 24.03.2017թ-ից՝ Երևանի ժամանակով
ժամը 08.00-ից.
- ✓ ավարտվում է 26.03.2017թ.՝ Երևանի ժամանակով
ժամը 20.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

**քայլ 1. ընտրողը մուտք է գործում կենտրոնական
ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի
www.elections.am՝ էլեկտրոնային քվեարկության
համապատասխան էջը և գրանցվում:**

Գրանցում

Գրանցում



Գրանցումը կատարվում է հետևյալ կերպ.

1. ընտրողը համապատասխան դաշտերում մուտքագրում է իր Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի սերիան և համարը, որի արդյունքում համակարգը ցուցադրում է ընտրողի անունը, ազգանունը.

2. մուտքագրում է փակ ծրարով իրեն փոխանցված անհատական ծածկագիրը.

Գրանցում

Քայլ երրորդ՝ մուտքագրեք Ձեր՝ օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը

*** Նշված դաշտերը ենթակա են պարտադիր լրացման**

Անձնագրի սերիա, համար *

Այվազյան Էլենա

Մածկագիր *

Մածկագիրը վավեր է:

Օգտվողի անուն *
(Username)

Անհատական գաղտնաբառ *
(Password)

Էլեկտրոնային վոստի հասցե

3. համակարգը առաջարկում է ընտրողին ներմուծել իր՝ որպես օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը: Յուրաքանչյուր ընտրող ինքն է որոշում իր օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը: Ցանկության դեպքում ընտրողը կարող է նշել իր էլեկտրոնային փոստի հասցեն: Օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը մուտքագրելուց հետո ընտրողի համար ապահովվում է համակարգի հասանելիությունը:

քայլ 2. Ընտրողը մուտք է գործում կայքի «Քվեարկել» բաժինը՝ մուտքագրելով օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը

քայլ 3. Ցուցադրվում է քվեաթերթիկը և ընտրողը ստանում է քվեարկելու հնարավորություն

Ընտրողը եղում է կատարում այն կրտսեղներն իսկ կամ կրտսեղներն իրենքին դաշխելի անվտանգ օրինակի դատարկ քառանկյանում, որին կողմ է քվեարկում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՑՆԵՐԿՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Բ Ա Ն Ա Թ Ն Ը Թ Ի Կ

Նշան կատարվեց ևնառ օրինակ «Հաստատվ քվեարկություն» կոճակը

02 Ապրիլ 2017թ

Հաստատվ քվեարկությունը		Էլեկտրոնային քվեարկություն
1	ԿՐՏՈՒՄՆԵՐԿՈՒԹՅԱՆ 1	1 Քվեարկում 2 Քվեարկում 3 Քվեարկում
2	ԿՐՏՈՒՄՆԵՐԿՈՒԹՅԱՆ 2	1 Քվեարկում 2 Քվեարկում 3 Քվեարկում
3	ԿՐՏՈՒՄՆԵՐԿՈՒԹՅԱՆ 3	1 Քվեարկում 2 Քվեարկում 3 Քվեարկում
4	ԿՐՏՈՒՄՆԵՐԿՈՒԹՅԱՆ 4	1 Քվեարկում 2 Քվեարկում 3 Քվեարկում

քայլ 4. Ընտրողը կատարում է իր ընտրությունը՝ նշում կատարելով այն կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանման դիմացի քառանկյունում, որին կողմ է քվեարկում: Քվեարկությունը կատարելուց հետո հաստատում է քվեարկության արդյունքը:

! ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մինչև էլեկտրոնային քվեարկության սահմանված ժամկետի ավարտը, ընտրողը, մուտք գործելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի՝ էլեկտրոնային քվեարկության համապատասխան էջ, մուտքագրելով իր՝ **որպես օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը**, անսահմանափակ հնարավորություն ունի փոխելու իր քվեն

Այդ դեպքում ընտրողի՝ նախկինում քվեարկած քվեաթերթիկը չի ցուցադրվում՝ քվեարկության գաղտնիության սկզբունքի պահպանման նպատակով:

Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվարկվում է էլեկտրոնային քվեարկությամբ **տրված վերջին քվեն:**

Այն քվեաթերթիկները, որոնք չեն ներառի նշում որևէ կուսակցության, կուսակցությունների դաշինքի օգտին համարվում են անվավեր: Դա հիմք չէ էլեկտրոնային եղանակով քվեարկողի համար ընդգրկվել ընտրողների հիմնական ցուցակում, քանի որ համակարգում բացակայում է կապը քվեաթերթիկի և էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողների ցուցակի միջև:

Էլեկտրոնային քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում քվեարկության ավարտից հետո՝ 2017թ. ապրիլի 2-ին՝ Երևանի ժամանակով ժամը 20:00-ից հետո:

Էլեկտրոնային քվեարկության կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 17-ի թիվ 32-Ն որոշմամբ, որին կարող եք ծանոթանալ հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Լրացուցից խորհրդատվություն կարող եք ստանալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից՝

հեռ. +37410 56-32-08

էլ. փոստի հասցե info@elections.am: